



Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Կարճ գրություն 16

Օգոստոս 2011

Պետական գնումներ

Կումունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից իրականացվող գնումներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Կումունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից իրականացվող գնումները
- Ե՞րբ է կիրառվում կումունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ



www.sigmaweb.org

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

Հրահանգը:

- Ո՞ր կազմակերպություններն են ենթակա Հրահանգի կիրառմանը:
- Որո՞նք են «գործունեության համապատասխան տեսակները»:
- Ո՞ր տեսակի պայմանագրերն են ընդգրկված:
- Որո՞նք են ԵՄ ֆինանսական շեմերը՝ Հրահանգին ենթակա պայմանագրերի համար:
- Գնումների ընթացակարգեր և գործիքներ
- Կոմունալ ծառայությունների ոլորտին հատուկ բացառություններ
- Ո՞րն է Հոդված 30-ի բացառությունը:
- Իրավունքի պաշտպանության միջոցներ:

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից իրականացվող գնումները համատեքստում

“Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություն” հասկացությունը հիմնականում օգտագործվում է՝ նկարագրելու այն կազմակերպությանը, որը մատուցում է ծառայություններ (ինչպես օրինակ, ջրի, էլեկտրականության, գազի մատակարարում կամ փոխադրման ծառայությունների մատուցում) ողջ հանրությանը՝ հիմնականում ամրագրված ցանցերի միջոցով: ԵՄ շատ Անդամ երկրներում գործունեությունը Կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտում վստահված են կառավարական կազմակերպություններին, որոնք հանրային ոլորտում գործող կազմակերպություններ են: Այնուամենայնիվ, որոշ Անդամ երկրներում Կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտում գործող կազմակերպություններն ամբողջապես մասնավոր կազմակերպություններ են (և ոչ հանրային ոլորտի կազմակերպություններ), որոնք համանապաստիսանում են Հանրային Ոլորտի Հրահանգով սահմանված պետական պատվիրատուի սահմանմանը: Այլ Անդամ երկրներում, կարող են լինել խառը կազմակերպություններ, ինչը նշանակում է, որ ն՛ մասնավոր, ն՛ հանրային կազմակերպությունները գործում են Կոմունալ ծառայությունների մատուցման միևնույն ոլորտում:

Այս խառը պատկերը խնդիր է ներկայացնում, երբ Եվրոպական իշխանությունները քննարկում են Կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտում գնումների գործունեության կանոնակարգումը: Այն Անդամ երկրներում, որտեղ պետական պատվիրատուն գործում է Կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտում, ըստ էության, պատճառ չկա, թե ինչու նրանք ևս չպետք է ընդգրկվեն Հանրային Ոլորտի Հրահանգի կարգավորման դաշտում: Այնուամենայնիվ, այս համակարգը չի “ներառում” մասնավոր կազմակերպությունները և առաջին հերթին կար այս կազմակերպություններն ընդգրկելու բացասական ցանկություն: Եվրոպական իշխանությունները չեն կարող ուղղակիորեն հարկադրել կանոնները Կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտում “հանրային” կազմակերպություններին. սա կստեղծեր անհավասար պայմաններ, քանի որ Կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտում կազմակերպությունները կընդգրկվեն միայն այն Անդամ երկրներում, որտեղ դրանք գտնվում են պետական ոլորտի կազմակերպությունների

և ոչ թե մասնավոր կազմակերպությունների ձեռքում: Սա կխախտեր մրցակցությունը և Անդամ երկրները պատրաստ չէին ընդունել նման կիսատ միջոցներ:

Այս ոլորտներում գործարկող կազմակերպությունները կանոնակարգելու պատճառ է նաև որոշ երկրներում շուկայի փակ լինելը, որտեղ հատուկ կամ բացառիկ իրավունքների գոյությունը կամ շնորհումը պետության կողմից ստեղծում է մենաշնորհային իրավիճակ, որը սահմանափակում է մրցակցությունը: Մրցակցությունը սահմանափակում է նաև այն փաստը, որ ամրագրված ցանցերի կառուցումը թանկ է, բայց այն պահպանելը և գործարկելը համեմատաբար հեշտ է: Կարող է պահանջվել նաև անցման իրավունք, որը հաճախ թանկ է կամ վարչական առումով դժվար է ձեռք բերել: Սա ստեղծում է երկարաժամկետ մենաշնորհային առավելություն այն օպերատորի համար, որն առաջինն է գործարկում նման ցանցը: Այս իրավիճակում հանրային շահը (ծառայության բոլոր օգտագործողների շահը, մասնավորապես՝ գնի և որակի հարաբերակցության առումով) պետք է պաշտպանվի՝ ներդնելով Կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտի օպերատորների կողմից գնումների կազմակերպման հատուկ կանոններ՝ ի հավելումն դրանց ներդրումները և գործարկումները ղեկավարող կանոնակարգերի:

Մինչև 1990 թվականը Եվրոպական կարգավորողն առաջադրել է գնումների կանոնները Կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտի նկատմամբ կիրառելու միջոցներ: Դա կատարվել է առանձին Կոմունալ ծառայությունների մատուցման վերաբերյալ Հրահանգով (Հրահանգ 2004/18/ԵՀ), որտեղ հստակեցվում է, որ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման վերաբերյալ ԵՄ կանոններին պարտավոր են հետևել ոչ միայն “հանրային” ոլորտի կազմակերպությունները, այլ մասնավոր ընկերությունները, որոնք գործարկում են հատուկ կամ բացառիկ իրավունքների հիման վրա: Կարևորագույն խնդիրը և՛ հանրային, և՛ մասնավոր ոլորտում ան է, թե որքանով է պետական պատվիրատուն ենթակա պետական ազդեցության, արդյոք ազդեցությունն իրականացվում է ուղղակի հսկողության կամ անուղղակի ազդեցության միջոցով (օրինակ, պետության լիազորությունը ղեկավարել հատուկ կամ բացառիկ իրավունքների շնորհումը մասնավոր կազմակերպություններին): Այս համատեքստում կարևոր է նշել, որ հեռահաղորդակցության ոլորտը նախկինում կարգավորվում էր, սակայն շուկայի լիակատար ազատականացումը 1990-ականների վերջում և 2000-ականներին

հանգեցրեց Կոմունալ ծառայությունների մատուցման վերաբերյալ Հրահանգի կարգավորման դաշտից այն հանելու որոշման:

Կանոններն ընդունվել են առանձին Հրահանգով, քանի որ դրույթներն ավելի ճկուն են, քան Հանրային Ոլորտի Հրահանգի դրույթները: Սահմանվել է, որ այս ոլորտի կազմակերպությունները գործարկում են առևտրային շուկայում, հետևաբար, չնայած պետական գնումների հիմնական սկզբունքները պետք է պահպանվեն, անհրաժեշտ է նաև ապահովել որոշակի ճկունություն՝ դրանց գործունեության ոլորտի իրականությունը հաշվի առնելու համար: Հետևաբար, կոմունալ ծառայությունների մատուցման վերաբերյալ Հրահանգը հիմնականում պակաս խիստ պահանջներ է ներկայացնում պետական պատվիրատուին, քան Հանրային Ոլորտի Հրահանգը, ներառյալ՝ ավելի բարձր ֆինանսական շեմը, հնարավորությունների ավելի լայն շրջանակ՝ պայմանագրի հայտարարության ժամկետի և ձևի առումով, ընտրության և գնահատման փուլի նկատմամբ ավելի քիչ հսկողություն և գնումների ավելի ճկուն գործիքների օգտագործում, քան նախատեսված են Հանրային Ոլորտի Հրահանգում: Սա արտացոլում է Անդամ երկրներից շատերում կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների բիզնեսի և գործարկման ավելի առևտրային բնույթը: Պայմանագրից բխող ընդհանուր դրույթները, ներառյալ՝ հավասար վերաբերմունքը և թափանցիկությունը կիրառվում են:

Ե՞րբ է կիրառվում կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգը:

Կարևոր է նշել, որ կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգը կիրառվում է կոմունալ ծառայությունների միայն չորս ոլորտում իրականացվող գործունեությանը վերաբերող պայմանագրերի նկատմամբ. ջուր, էներգիա, տրանսպորտ և փոստային ծառայություններ:

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգը կիրառվում է միայն, երբ գնորդ կազմակերպությունը համապատասխանում է Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգով նախատեսված կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպության սահմանմանը և միայն այնքանով, որքանով կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունն

իրականացնում է Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգով սահմանված համապատասխան գործունեություն և սահմանված տեսակի պայմանագրերի հետ կապված:

Երբ այս պահանջները բավարարվում են, Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգը կիրառվում է պայմանագրի կոնկրետ տեսակների նկատմամբ, որտեղ պայմանագրի արժեքը գերազանցում է ԵՄ ֆինանսական շեմը:

Ո՞ր կազմակերպություններն են ներառված Հրահանգի կարգավորման դաշտում:

Արդյոք կազմակերպությունը համապատասխանում է կոմունալ ծառայություն մատուցող կազմակերպության սահմանմանը, թե ոչ, կապված չէ կազմակերպության՝ բնույթով բաց կամ փակ բաժնետիրական ընկերություն լինելու հետ: Այն կապված է երկու գործոնների հետ. արդյոք կազմակերպությունը գործում է որոշակի գործունեության ոլորտում (“գործունեության համապատասխան ոլորտ”) և հիմքը, որի հիման վրա կազմակերպությունն իրականացնում է այդ գործունեությունը:

Կա սահմանված կազմակերպությունների երեք տեսակ.

- **Պետական “պատվիրատուներ”.** Պետական պատվիրատուի սահմանումը նույնն է, ինչ որ նախատեսված է Հանրային ոլորտին վերաբերող Հրահանգում: Կա պետական պատվիրատուի երկու հիմնական տեսակ՝ “պետական կառավարման մարմինները” և “հանրային հատվածի կազմակերպությունները” և այս հարցի վերաբերյալ նախադեպային իրավունքը հանգեցրել է ճկուն սահմանման: (Հետագա տեղեկատվության համար տե՛ս Պետական գնումների վերաբերյալ կարճ գրություն 3- Ո՞րն է պետական պատվիրատուն):
- **Պետական ձեռնարկություններ.** Պետական ձեռնարկությունները սահմանված են Կոմունալ ծառայությունների վերաբերյալ Հրահանգով՝ որպես ցանկացած ձեռնարկություն, որի նկատմամբ պետական կառավարման մարմինները կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացնել գերակա ազդեցություն՝

ձեռնարկության նկատմամբ իրենց սեփականության, դրանցում իրենց ֆինանսական մասնակցության կամ դրանց ղեկավարող նորմերի ուժով:

- **Հատուկ կամ բացառիկ իրավունքների հիման վրա գործող կազմակերպություններ.** Կոմունալ ծառայությունների մասին Հրահանգը կիրառվում է նաև այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք համապատասխանում են երեք մասից բաղկացած սահմանմանը: Սրանք այն կազմակերպություններն են՝
 - որոնք չեն հանդիսանում պետական կառավարման մարմին կամ պետական ձեռնարկություն, և
 - որոնց գործունեության տեսակներից *մեկը* ներքոնշյալ գործունեության տեսակներից է, և
 - որոնք գործում են անդամ-երկրի իրավասու մարմնի կողմից շնորհված “հատուկ կամ բացառիկ իրավունքների” հիման վրա

Կազմակերպությունների տեսակներ, որոնք համապատասխանում են կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպության սահմանմանը

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպության սահմանմանը համապատասխանող կազմակերպություններից մի քանիսը, բայց ոչ բոլորը թվարկված են Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգի Հավելված I-ից մինչև X-ը: Թվարկված կազմակերպությունները ներառում են, օրինակ,

Pošta Slovenije (Պոստա Սլովենիյե), Gaz de France (Գազ դե Ֆրանս), Electricidade de Portugal (Էլեկտրիսիդադե դե Պորտուգալ), ջրի մատակարարման կազմակերպությունները Ֆինլանդիայում, Deutsche Bahn (Դոչե Բահն), Trenitalia (Տրենիտալիա), Eurotunnel (Եվրոթունել), Societatea Comercială Minieră ‘Banat-Anina’ SA (Սոցիետատա Կոմերսիալա Մինիերա “Բանատ-Անինա” – Ռումինիա),

Sofia Airport (Մոֆիայի օդանավակայան– Բուլղարիա):

Որո՞նք են “գործունեության համապատասխան տեսակները”:

Պետական պատվիրատուները, որոնք համապատասխանում են վերոնշյալ սահմանմանը, ընդգրկվում են Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգի կարգավորման դաշտում, բայց միայն այնքանով, որքանով իրականացնում են “գործունեության համապատասխան տեսակ” և միայն այն պայմանագրերի հետ կապված, որոնք շնորհվել են այդ գործունեության իրականացման նպատակով:

Ամփոփ, գործունեության այս տեսակներն են.

- **Ջուր.** խմելու ջրի մատակարարմանը վերաբերող գործունեության տեսակներ: Հիդրավլիկ ինժեներիայի և հողերի դրենաժի հետ կապված պայմանագրերը և կոյուղու օտարումը ևս կարող են ընդգրկվել, եթե դրանք շնորհվում են խմելու ջուր մատակարարող կազմակերպության կողմից:

“Խմելու ջրի մատակարարման” հետ կապված գործունեության տեսակներն ընդգրկում են ամրակայված ցանցի տրամադրումը կամ գործարկումը, որը ծառայություններ է մատուցում հանրությանը՝ կապված խմելու ջրի արտադրման, փոխադրման և մատակարարման հետ կամ նման ցանցերին խմելու ջրի մատակարարումը: “Ամրակայված ցանցը” կարող է տարբերակվել մատակարարման այլ մեթոդներից, ինչպիսին է շշաված ջրի վաճառքը, որը դուրս է Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգի կարգավորման դաշտից:

- **Էներգիա.** ներառյալ՝ էլեկտրականության, գազի կամ ջեռուցման հետ կապված՝ հանրությանը ծառայություններ մատուցելու համար նախատեսված ամրակայված ցանցի տրամադրումը կամ գործարկումը, ինչպես նաև էլեկտրականության, գազի և ջեռուցման մատակարարումը նման ցանցեր: Ընդգրկված է նաև աշխարհագրական տեղանքի

շահագործումը՝ նավթի, գազի, ածուխի և այլ պինդ վառելիքի հետազոտման և արդյունահանման համար:

- **Փոխադրման ծառայություններ.** սա ընդգրկում է տրանսպորտային ծառայություններից մի քանիսը, բայց ոչ բոլորը: Ընդգրկված են աշխարհագրական տեղանքի շահագործումը՝ օդանավակայանների, նավահանգիստների կամ ներքին ուղիների կամ կայանների օժանդակ հարմարությունների համար՝ օդային, ծովային կամ ներքին ջրային ուղիներով փոխադրողների համար: Ընդգրկված է նաև տրանսպորտային ցանցերի հատուկ տեսակների գործարկումը, որոնք ծառայություններ են մատուցում հանրությանը- երկաթուղի, ավտոմատացված համակարգեր, տրամվայ, տրոլեյբուս, ավտոբուս և մալուխային ցանցեր:
- **Փոստային ծառայություններ.** փոստային առաքումների մաքսազերծումը, տեսակավորումը, տեղաբաշխումը և բաժանումը, ինչպես նաև այլ սահմանված ծառայություններ, ինչպիսիք են փոստային բաժանմունքի և տրանսպորտային ապահովման ծառայություններ, որոնք մատուցվում են Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություն հանդիսացող ընկերության կողմից:

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգը նախատեսում է տարբեր իրավիճակները տարանջատելու մեխանիզմ, երբ պայմանագիրն ընդգրկում է գործունեության մի քանի համապատասխան տեսակ, գործունեության տեսակներ, որոնք ընդգրկված են և՛ Հանրային Ոլորտի Հրահանգի, և՛ Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգի կարգավորման դաշտերում, ինչպես նաև գործունեության այն տեսակները, որոնք ընդգրկված չեն Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգի կարգավորման դաշտում:

Անհրաժեշտ է նշել, որ երբ Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունն իրականացնում է գործունեություն, որը “գործունեության համապատասխան տեսակ” չէ, Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունն այդ գործունեության մասով չի ներառվում Կոմունալ

ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգի կարգավորման դաշտում: Օրինակ, երբ օդանավակայան գործարկող կազմակերպությունը ցանկանում է պայմանագիր շնորհել հյուրանոցի կառուցման և գործարկման համար, որը տեղակայված չէ օդանավակայանի տեղակայման վայրում, պայմանագրի շնորհման ընթացակարգը չի կարգավորվի Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգով: Սա այն պատճառով է, որ “գործունեության համապատասխան տեսակը” սահմանափակ է աշխարհագրական առումով: Նմանապես, տրանսպորտային ցանցի տրամադրումը ոչ հանրության համար, ինչպիսին է ֆրախտի երկաթուղային գիծը, որն ամբողջությամբ գտնվում է մեծ գործարանի տարածքում, չի ներառվի Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգի կարգավորման դաշտում, քանի որ այն բացարձակապես տնտեսական ուղղվածություն ունեցող ծառայություն է՝ չնախատեսված հանրության շահի համար: Շատ մեծ ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, թե արդյոք կոնկրետ հանգամանքում շնորհվող պայմանագիրն ընդգրկված է Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգի կարգավորման դաշտում, թե ոչ:

Ո՞ր պայմանագրերն են ընդգրկված:

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգն ընդգրկում է պայմանագրերի երեք հիմնական տեսակ.

- Աշխատանքների կատարման
- Ապրանքների մատակարարման
- Ծառայությունների մատուցման. որոշ ծառայություններ միայն մասնակիորեն են ընդգրկված Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգի կարգավորման դաշտում, համապատասխանում են միայն այն պահանջներին, որոնք վերաբերում են տեխնիկական մասնագրերին և թափանցիկության սկզբունքին: Սրանց նկատմամբ կիրառվում են նույն մոտեցումները, ինչ այլ ծառայությունների դեպքում:

Տե՛ս *Պետական գնումների վերաբերյալ կարճ գրություն 4* հետագա տեղեկատվության համար, թե որ պայմանագրերն են ընդգրկված գնումների Հրահանգներում աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի սահմանման մեջ և թե ինչպես են դասակարգվում աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և/կամ ծառայությունների մատուցման պայմանագրերը:

Որո՞նք են ԵՄ ֆինանսական շեմերը՝ Հրահանգին ենթակա պայմանագրերի համար:

ԵՄ համապատասխան ֆինանսական շեմերն ավելի բարձր են, քան Հանրային Ոլորտի Հրահանգի կարգավորման դաշտում ընդգրկված պայմանագրերի նկատմամբ կիրառվող շեմերը: Ֆինանսական շեմերը ամրագրվում են երկու տարվա համար: 2010/11 թվականների համար դրանք են. 4845000 եվրո աշխատանքների կատարման պայմանագրերի և 387000 եվրո ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար: Այս շեմերը կփոխվեն 2012 թ.-ի հունվարի 1-ից: Ներկայիս շեմերի արժեքներին ծանոթանալու համար կարող եք այցելել.

http://ec.europa.eu/internal_market/publicprocurement/rules/current/index_en.htm

Գոյություն ունեն մանրամասն դրույթներ, որոնք սահմանում են, թե ինչպես է հաշվարկվում է պայմանագրի արժեքը՝ հատուկ տեսակի պայմանագրի և հատուկ իրավիճակների համար: Պայմանագրի արժեքի հաշվարկմանը վերաբերող դրույթների հիմնական նպատակը ապահովելն է, որ առկա լինեն շնորհվելիք պայմանագրի արժեքի հաշվարկման պարզ և թափանցիկ նախնական հաշվարկներ, և որ պետական պատվիրատուն չփորձի խուսափել Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգի կիրառումից, օրինակ, պահանջը կամ պայմանագիրը ավելի փոքր, շեմից ցածր բաժինների կամ պայմանագրերի բաժանելու միջոցով:

Տե՛ս նաև Պետական գնումների վերաբերյալ կարճ գրություն 5-ԵՄ ֆինանսական շեմերն ընկալելը:

Գնումների ընթացակարգերը

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգը նախատեսում է գնումների երեք հիմնական ընթացակարգեր.

- բաց ընթացակարգ
- սահմանափակ ընթացակարգ
- հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններն ազատ են մրցակցային ընթացակարգի ձևի ընտրության հարցում: Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններն ունեն նաև ճկունություն այն առումով, թե ինչպես են հրապարակում հայտարարությունը (“մրցույթի հայտարարում”): Սահմանափակ ընթացակարգ կամ հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ իրականացնելիս կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններն կարող են օգտագործել

- որոշակի տեսակի պայմանագրերի համար հայտարարություն, կամ
- տարեկան “ցուցադրական հայտարարություն”, կամ
- նախաորակավորման համակարգի մասին հայտարարություն

Բաց ընթացակարգ իրականացնելիս կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններն ընտրության իրավունք չունեն և պետք է հրապարակեն պայմանագրի հայտարարությունը:

Այս դեպքում կիրառվում են օրենքով նախատեսված ժամկետները, օգտագործվում է ստանդարտ ձևաչափով պայմանագրի հայտարարություն, որը հրապարակվում է Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկագրում:

Գնումների ընթացակարգի իրականացումը, գնումների գործընթացի իրականացումն ընդգրկող Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների

վերաբերյալ Հրահանգի դրույթները հիմնականում պակաս մանրամասն են և ավելի քիչ ցուցումներ են պարունակում, քան հանրային ոլորտի նկատմամբ կիրառվող կանոնները: Օրինակ, որակական ընտրության համար չափորոշիչների ամբողջական ցուցակ գոյություն չունի և առկա են դրույթներ, որոնք թույլատրում են հայտերի ստացման վերջնաժամկետները սահմանել փոխադարձ համաձայնությամբ: Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունները, այնուամենայնիվ, պարտավոր են հետևել ընդհանուր սկզբունքներին՝ ապահովելու հավասար վերաբերմունքը, թափանցիկությունը և չխախտել մրցակցությունը:

Գնումների գործիքներ

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններն ունեն գնումների մի շարք գործիքներ, որոնք կարող են օգտագործել.

Նախատրակավորման համակարգեր. Նախատրակավորման համակարգը հատուկ է միայն Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգին: Սա ԵՄՊՏ-ում հրապարակվող մի համակարգ է, որտեղ կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպության հետ պայմանագիր կնքելու մեջ հետաքրքրություն ցուցաբերող տնտեսվարող սուբյեկտները պետք է գրանցվեն՝ որպես հնարավոր մասնակիցներ որոշակի աշխատանքների կատարման, մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար: Օգտագործելով նախասահմանված և հրապարակված որակավորման չափորոշիչներ, կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունը գրանցում է այս տնտեսվարող սուբյեկտներից մի քանիսին կամ բոլորին: Գրանցված տնտեսվարող սուբյեկտները կազմում են մեկ ամբողջություն որոշակի աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար, որտեղից կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունը կարող է ընտրել նրանց, որոնք հրավիրվելու են հայտերի ներկայացման կամ պայմանագրերի վերաբերյալ բանակցության:

Շրջանակային համաձայնագրեր. Շրջանակային համաձայնագիրը ԵՄՊՏ-ում հայտարարվող սխեմա է, որի համաձայն մեկ կամ մի քանի տնտեսվարող

սուբյեկտներ նշանակվում են համաձայնագրի անդամներ՝ ընտրության փուլի տեղեկատվության և հայտերի ներկայացումից ու գնահատումից հետո: Շրջանակային համաձայնագիրը սահմանում է պայմանագրերի շնորհումը կարգավորող պայմանները, մասնավորապես նրանք, որոնք վերաբերում են գնին և, անհրաժեշտության դեպքում, քանակին: Շրջանակային համաձայնագրի դեպքում վերանում է ԵՄՊՏ-ում հայտարարություն տալու հետագա պարտավորությունը, առանձին պայմանագրերը շնորհվում են շրջանակային համաձայնագրի պայմանների համաձայն: Գործընթացն ավելի հեշտ է, քան հանրային ոլորտը և չկան մանրամասն դրույթներ, թե ինչպես է ստեղծվում կամ գործարկում շրջանակային համաձայնագիրը: Հանրային ոլորտում շրջանակային համաձայնագրերի վերաբերյալ հետագա տեղեկատվության համար տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 19- Շրջանակային Համաձայնագրեր:*

Գնումների դինամիկ համակարգեր. Գնումների դինամիկ համակարգը ամբողջապես էլեկտրոնային ձևով իրականացվող գործընթաց է՝ հաճախակի արվող գնումների իրականացման համար: Հայտարարությունը հրապարակվում է ԵՄՊՏ-ում և հիմնականում սահմանափակված է 4 տարի ժամկետով: Բաց ընթացակարգը կիրառվում է այն տնտեսվարող սուբյեկտներին ընտրելու համար, որոնք ազատ են կիրառելու համատեղ համակարգ ցանկացած ժամանակ՝ ցուցադրական հայտեր ներկայացնելու միջոցով: Երբ պետական պատվիրատուն ցանկանում է շնորհել պայմանագիրը՝ օգտագործելով գնումների դինամիկ համակարգը, այն ԵՄՊՏ-ում հրապարակում է պարզեցված հայտարարություն և հրավիրում է ցուցադրական հայտերի ներկայացման: Գնումների դինամիկ համակարգերը հաճախ չեն օգտագործվում:

Էլեկտրոնային աճուրդներ. Էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային գործընթաց է, որը թույլատրում է նոր գների ներկայացում (ավելի ցածր) և/կամ հայտի նոր տարրերի ներկայացում՝ հայտերի սկզբնական լրիվ գնահատման իրականացումից հետո: Էլեկտրոնային աճուրդը տեղի է ունենում մրցութային գործընթացի վերջնական փուլում, որը մինչ այդ պահին իրականացվել էր Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգով նախատեսված գնումների ստանդարտ ընթացակարգերի համաձայն: Տե՛ս նաև

Գնումների վերաբերյալ կարճ գրություն 11-Գնումների գործիքներ և Գնումների վերաբերյալ կարճ գրություն 17-Էլեկտրոնային գնումներ:

Նախագծային մրցույթներ. Գոյություն ունեն նախագծային մրցույթների իրականացումը սահմանող հատուկ դրույթներ, որոնք կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների դեպքում միայն ծառայությունների մատուցման պայմանագրերի համար են: Իրականացման վերաբերյալ նորմերը նման են հանրային ոլորտի նկատմամբ կիրառվող նորմերին:

Կոմունալ ծառայությունների ոլորտին հատուկ բացառություններ

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգը նախատեսում է ոլորտին հատուկ բացառություններ կոմունալ ծառայությունների մի շարք ոլորտներում՝ հիմնված գործնական հայեցակետերի վրա, որոնք վերաբերում են ապրանքների մատակարարմանը կամ այս շուկաներում մրցակցության աստիճանին: Նման բացառությունները կիրառվում են էներգիայի արտադրության համար վառելիքի և էներգիայի գնման, ջրի մատակարարման ծառայությունների համար ջրի գնման, ավտոբուսային փոխադրամիջոցի որոշակի ծառայությունների գնման և նավթի ու գազի հետազոտման ու արդյունահանման նկատմամբ:

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգը պարունակում է մի շարք բացառություններ, որոնք կիրառվում են Կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտում:

- **Եվրոպական Միությունից դուրս իրականացվող գործունեությունը.** Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգը չի տարածվում այն պայմանագրերի շնորհման ընթացակարգերի վրա, որոնք պետական պատվիրատուն շնորհում է իրենց համապատասխան գործունեության նպատակներից զատ այլ նպատակներով կամ երրորդ երկրում նման գործունեության իրականացման նպատակներով՝ Եվրոպական Միության

ներսում ցանցի կամ աշխարհագրական տարածքի ֆիզիկական օգտագործում չներառող պայմաններում:

- **Դուստր ընկերությունների բացառությունը.** Երբ “ընկերությունը” կազմված է մի քանի փոխադարձաբար իրար տնօրինող կամ փոխադարձաբար կախված կազմակերպություններից, Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգը նախատեսում է հատուկ բացառություն՝ որոշակի հանգամանքներում նրանց միջև իրականացված գնումների համար: Դրանց վերաբերում են որպես “ներքին” պայմանագրեր, որոնք հայտնի են որպես միջխմբային գործարքներ:
- **Գնումներ վերավաճառքի կամ վարձակալության հանձնման համար.** Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ Հրահանգը չի տարածվում այն պայմանագրերի շնորհման ընթացակարգերի վրա, որոնք շնորհվում են վերավաճառքի կամ երրորդ անձանց վարձակալության հանձնելու համար: Սա պետք է ներառի, օրինակ, ապրանքների գնման պայմանագրերը, երբ պետական պատվիրատուն նպատակ ունի վաճառել կամ վարձակալության հանձնել մրցակցային շուկայում գնված սարքավորումները: Այս պայմանագրերը կբացառվեն միայն, եթե պետական պատվիրատուն չունի հատուկ կամ բացառիկ իրավունք՝ վաճառել կամ վարձակալության հանձնել նման պայմանագրի առարկան և այլ կազմակերպություններն ազատ են վաճառել կամ վարձակալության հանձնել այն նույն պայմաններով, ինչ պետական պատվիրատուն:

Ո՞րն է Հոդված 30-ի բացառությունը:

Հոդված 30-ի համաձայն՝ Եվրոպական Հանձնաժողովը կարող է Կոմունալ ծառայությունների մասին Հրահանգի դրույթներից բացառություն շնորհել այն պետական պատվիրատուներին, որոնք իրականացնում են գործունեություն համապատասխան տեսակ, որը, այն անդամ-երկրում, որտեղ այդ գործունեությունն իրականացվում է, ուղղակիորեն ենթարկվում է մրցակցության և այնպիսի շուկայում է, որի մուտքը սահմանափակված է:

Փորձարկումը, թե արդյոք շուկաները մրցակցային են, անհրաժեշտաբար հաշվի է առնում քննարկվող անդամ-պետությունում առկա և՛ իրավաբանական, և՛ փաստացի իրավիճակները և անհրաժեշտաբար պետք է հասցեագրի առանձին կոնկրետ դեպքեր: Առանձին Անդամ երկրներում գործունեության տեսակների հետ կապված շնորհվող հիմնական բացառությունները ներառում են էլեկտրականության արտադրությունը և մատակարարումը, նավթի և գազի արդյունահանումը և էքսպրես ու սուրհանդակային ծառայությունները:

Բացառությունը շնորհվում է Եվրոպական Հանձնաժողովի կողմից ընդունված Որոշման ձևով, որը հետևանք է ԵՄ անդամ-երկրի, պետական պատվիրատուի դիմումի կամ հենց Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ դիմումի: Հողված 30-ի ընթացակարգը լրացվել է 2005/15 Որոշմամբ (“Որոշում”), որը, այլ հարցերի հետ մեկտեղ, ընդգրկում է հրատարակման պահանջները, երկարաձգումները և որոշումների ուղարկման ընթացակարգեր:

Շնորհված բացառությունների ցուցակը կարող էք գտնել հետևյալ համացանցային էջում.

http://ec.europa.eu/internal_market/publicprocurement/rules/exempt_markets/index_en.htm

Իրավունքի պաշտպանության միջոցները

Իրավունքի պաշտպանության միջոցները մասնակիցների կողմից ձեռնարկվող այն իրավական գործողություններն են, որոնք վերջիններիս հնարավորություն են տալիս իրավական ակտերի շրջանակում իրացնել իրենց այն իրավունքները, որոնք խախտվել են պետական պատվիրատուների գործողության կամ անգործության հետևանքով:

92/13/ԵՏՀ Հրահանգը, որը փոփոխվել է 2007/66/ԵՀ Հրահանգով (Իրավունքների պաշտպանության միջոցների մասին Հրահանգ), սահմանում է Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից պայմանագրերի շնորհման ընթացակարգերին վերաբերող իրավունքի պաշտպանության միջոցները:

Իրավունքների պաշտպանության միջոցների մասին Հրահանգների նպատակը հնարավորություն տալն է, որ պայմանագրի շնորհման ընթացակարգում առաջացող անօրինականությունները և պայմանագրի շնորհման որոշումը վիճարկվեն և ուղղվեն, իրենց առաջացումից անմիջապես հետո: Սա բարձրացնում է պայմանագրի շնորհման ընթացակարգերի օրինակությունը, գործընթացի թափանցիկությունը, մասնակիցներ մոտ առաջացնում է վստահություն և օժանդակում է մրցակցության աստիճանի մեծացմանը:

Չնայած հիմնական սկզբունքները և պահանջները կիրառվում են բոլոր Անդամ երկրներում, տարբեր Անդամ երկրներ ունեն տարբեր իրավական և դատական ռեժիմներ, ինչը նշանակում է, որ Իրավունքների պաշտպանության միջոցների մասին Հրահանգի մանրամասն կիրարկումը տարբերվում է՝ արտացոլելու որոշակի հանգամանքները: Իրավունքի պաշտպանության բոլոր ազգային միջոցները պետք է լինեն.

- հստակ և պարզ, այսինքն՝ հասկանալի և մասնակիցների կողմից հեշտ կիրառելի,
- հասանելի պայմանագրի շնորհման ընթացակարգին մասնակցել ցանկացող բոլոր մասնակիցներին՝ առանց խտրականության, մասնավորապես անկախ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ լինելու հանգամանքի,
- արդյունավետ՝ մասնակցի և/կամ պետական պատվիրատուների հակաօրինական գործողությունների կանխման և վերացման մեջ:

Իրավունքի պաշտպանության միջոցների մասին Հրահանգը պահանջում է, որ Անդամ երկրները համապատասխան հանգամանքներում նախատեսեն մորատորիում պայմանագրի շնորհման փուլում, երբ գնումների գործընթացին մասնակցող մասնակիցները ծանուցվում են պայմանագրի շնորհման որոշման մասին: Սա մի միջոց է՝ ապահովելու շնորհման ընթացակարգը վիճարկելու իրավունքը, մինչև այն ժամանակը, երբ գնումների պայմանագրի կիրարկումն այն ավելի դժվար կդարձնի: Գոյություն ունեն այլ դրույթներ, որոնք ներառում են ուղղակի շնորհման և, որոշ դեպքերում, կնքված պայմանագրի անվավեր ճանաչման սանկցիայի առկայության մասին հայտարարելու պարտավորությունը:

Տե՛ս նաև *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 12- Իրավունքի պաշտպանության միջոցներ*:

Հետագա ընթերցանություն.

- Տե՛ս Եվրոպական Հանձնաժողովի համացանցային էջ՝ այն գնումների վերաբերյալ, որոնք ընդգրկում են ն՛ հանրային ոլորտը, ն՛ կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտը
http://ec.europa.eu/internal_market/publicprocurement/index_en.htm